ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի

հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի խորհրդի

2022 թ. օգոստոսի 29-ի առերես նիստի

Օրակարգ

1. 2022-2023 ուստարվա մեկնարկի մասին:

/Զեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյան/

2. Ընթացիք հարցեր:

1. Թերեզա Ազատյանը ողջունեց և ուսումնական տարվա մեկնարկի հետ կապված շնորհավորեց, բարի ընթացք մաղթեց ամբիոնի ողջ պրոֆեսորադասախոսական կազմին: Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը անցնելով օրակարգի առաջին հարցին՝ ներկայացրեց 2022-2023 ուստարվա մեկնարկը: Ընդգծվեց, որ ամբիոնի բոլոր դասախոսներին ուղղարկվել է նախնական բաշխումները: Հիմնական փոփոխությունները կատարվել են առաջին կուրսերում և համապատասխան ծանրաբեռնվածություններում: Հիմնական պատճառը եղել է նախարարության կողմից առաջին կուրսերի ընդունելության քննությունների սահմանած կարգը, համաձայն որի դիմորդները պետք է հանձնեին ընդունելության երկու քննություն ի տարբերություն նախորդ տարիների: Հաշվետու ուսումնական տարում ամբիոնի դասախոսական կազմը պահպանվել է, հնարավորինս աշխատանքներ են կազմակերպվել դրույքաչափերի պահպանման ուղղությամբ: Իրենց դիմումների համաձայն փոփոխվել է մրցույթով անցած, ընտրված դասախոսների դրույքաչափերը: Ընդգծվեց նաև այն հանգամանքը, որ ծանրաբեռնվածությունից դուրս է եկել ընթերականերին բաժին ընկնող

ժամաքանակները, փոխարենը ծանրաբեռնվածությունում ավելացել է որակի պատասխանատուներին հատկացվող ժամերը: Համաձայն որի ամբիոնից որպես որակի պատասխանատու իր աշխատանքները կշարունակի Սուսաննա Մուրադյանը, իսկ ֆակուլտետից որպես պատասխանատու՝ Սվետլանա Մուրադյանը:

Թերեզա Ազատյանը հորդորեց դասախոսներին լինել առավել ակտիվ ընդունելության գործընթացում դիմորդներին ուղղորդելու հարցում, հասարակության մեջ մասնագիտության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման և հնարավորինս տարածման հարցում: Կարևորվեց նաև հեռակայի ընդունելության գործընթացում ակտիվ աշխատանքների կազմակերպմանն ու դիմորդների ուղղորդմանը: Ընդգծվեց նաև, որ հեռակա ուսուցման համակարգի ընդունելության քննությունները հաշվետու տարում կկազմակերպվեն այն նույն ընթացակարգով, ինչ և առկա ուսուցման համակարգում:

Նիստի նախագահ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար **Սվետլանա Մուրադյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի

հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի խորհրդի

2022 թ. սեպտեմբերի 27-ի առերես նիստի

Օրակարգ՝

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի քննարկում հաստատում

/Զեկուցողներ՝ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյան, ամբիոնի դասախոսներ/

2. Ամբիոնի Google classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման արդյունքների մասին

/Զեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Սուսաննա Մուրադյան/

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկման և հաստատման հարցը ներկայացրեց ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը։ Թ. Ազատյանը նշեց, որ բակալավր կրթական ծրագրի 4–րդ և 5–րդ կուրսերում իրականացվել է վիճակահանություն, համաձայն որի յուրաքանչյուր ուսանող ընտրել է իր ավարտական աշխատանքի գիտական ղեկավարին։ Ընդգծվեց, որ համապատասխան ուսումնական տարում ավարտական կուրսերից միայն տիֆլոմանկավարժություն բաժնում ուսանող չկա, իսկ մնացյալ բաժիններում պատկերը հետևյալն է՝ առկա ուսուցման համակարգում սուրդոմանկավարժություն բաժնում 5 ուսանող, օլիգոֆրենոմանկավարժություն բաժին՝ 3 ուսանող, հեռակա ուսուցման համակարգում սուրդոմանկավարժություն բաժնում 6 ուսանող, օլիգոֆրենոմանկավարժություն բաժին՝ 5 ուսանող։

Մագիստրոսական թեզերի հետ կապված Թերեզա Ազատյանը նշեց, որ գիտական ղեկավարների ընտրության հարցը այլ կերպ է կազմակերպվել։ Ուսանողներն իրենց ցանկությամբ և կուրսում ընդհանուր համաձայնության գալով՝ հնարավորություն են ունեցել ընտրելու իրենց գիտական ղեկավարներին։ Ներկայացվեց հաշվետու ուսումնական տարում ընդունված մագիստրոսների թվակազմը։ Համաձայն որի հատուկ մանկավարժություն բաժին ընդունվել է 6 հոգի, հատուկ հոգեբանություն՝ 9 հոգի, սուրդոմանկավարժություն բաժնում 3 հոգի, օլիգոֆրենոմանկավարժություն բաժին 3 հոգի, տիֆլոմանկավարժություն 3 հոգի։

Թերեզա Ազատյանը հորդորեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի բոլոր գիտական ղեկավարներին լինել ակտիվ, ուսանողների հետ հիմնավոր քննարկել ներկայացված թեմաները և բերել վերջնական տեսքի։ Ընդգծվեց նաև, որ ամբիոնի մասնագետի կողմից կստեղծվի ամբիոնի բոլոր դասախոսներին հասանելի պանակ, որտեղ կներբեռնվեն թե՛ ավարտական աշխատանքների, թե՛ մագիստրոսական թեզերի բոլոր թեմաները, որտեղ դասախոսները կկարողանան կատարել սեփական դիտարկումներն ու լրացումները։

2. Ամբիոնի Google classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման արդյունքները ներկայացրեց Սուսաննա Մուրադյանը։ Ս. Մուրադյանը նշեց, որ իրականացվել է մշտադիտարկում ամբիոնի թվով 20 դասախոսի կողմից դասավանդվող առարկաների կտրվածքով։ Յուրաքանչյուր հարթակում նկատված խնդիր քննարկվել է համապատասխան դասախոսների հետ։ Հիմնական խնդիրներն են եղել ԱՈՒՄՓ–երի, տրոհումների և հարցաշարերի հաստատման համարները, էլեկտրոնային մատյաններում ուսանողների անվանացանկի և ներկա բացակաների մասնակի կատարումը։ Մեծամասամբ դասախոսները ԱՈՒՄՓ–երը, տրոհումները ներկայացրել են նոր ձևաչափով։ Կարևորվեց նաև ԱՈՒՄՓ–երի, տրոհումների և հարցաշարերի առանձին ֆայլերով հարթակում տեղադրելը, քանի որ մեկ ֆայլով տեղադրելու դեպքում հաճախ չի երևում բոլոր կցված ֆայլերը։ Միևնույն ժամանակ ամբիոնի որակի պատասխանատու Ս. Մուրադյանը նշեց, որ բացի իր

մշտադիտարկումից որակի վարչությունը նույնպես իրականացնելու է մշտադիտարկում ֆակուլտետի շրջանակով։ Դասախոսներին տրամադրվեց եռօրյա ժամանակ առկա խնդիրների կարգավորելու համար։

Նիստի նախագահ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար **Սվետլանա Մուրադյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի

հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի խորհրդի

2022 թ. օգոստոսի 29-ի առերես նիստի

Օրակարգ

1. Ամբիոնի Google classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման արդյունքների մասին քննարկում

/Զեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյան/

2. Բակալավր երկրորդ, երրորդ և մագիստրատուրա երկրորդ կուրսերի պրակտիկայի ընթացքի քննարկում և վերլուծություն

/Զեկուցողներ՝ ամբիոնի պրակտիկայի ղեկավար մ.գ.թ. դոցենտ Մարուքյան Վերա, մեթոդիստներ/

3. Ընթացիք հարցեր

1. Ամբիոնի Google classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման արդյունքների մասին խոսեց ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը: Թ. Ազատյանը նշեց, որ ինչպես ամբիոնի որակի պատասխանանատուի, այնպես էլ համալսարանի որակի վարչության կողմից կատարված մշտադիտարկման արդյունքների, ինչպես նաև գիտական խորհրդի նիստի ժամանակ բարձրաձայնված արդյունքների համաձայն ֆակուլտետը բավականին հուսալի վիճակում է և համալրել է առաջատար ֆակուլտետների շարքը: Որպես մշտադիտարկման արդյունքում առկա թերություններ Թերեզա Ազատյանը ընդգծեց էլեկտրոնային մատյաններում մասնակի բացթողումները: Թ. Ազատյանը կարևորեց ամբիոնի դասախոսների կողմից առարկայական ծրագրերի

նոր ձևաչափով հարթակում տեղադրելը, միևնույն ժամանակ հորդորեց մնացյալ դասախոսներին համապատասխան աշխատանքները բերել ավարտուն տեսքի։

Ամբիոնի վարիչը նշեց նաև որ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսական կազմից և որակի պատասխանատուներից ստեղծվել է խումբ, ովքեր ակտիվ աշխատանքներ են տանում ԲԿԾ–ների նոր ձևաչափով կազմելու և ներկայացնելու ուղղությամբ։ Ասվածին հավելվեց նաև, որ աշխատանքներն ավարտուն տեսքի բերելուց հետո հասանելի կլինի նաև ամբիոնի բոլոր դասախոսներին անհատապես ուսումնասիրելու և առկա բոլոր դիտարկումները կատարելու համար։

2. Բակալավր կրթական ծրագրի երկրորդ, երրորդ և մագիստրոսի կրթական ծրագրի երկրորդ կուրսերի պրակտիկայի ընթացիկ արդյունքները ներկայացրեց Վերա Մարուքյանը։ Վ. Մարուքյանը նշեց, որ ներկա պահին բակալավր կրթական ծրագրի երկրորդ, երրորդ պրակտիկ գործունեությունը ընթացքի մեջ է։ Որպես խնդիր առանձնացրեց սուրդոմանկավարժություն բակալավր կրթական ծրագրի երրորդ կուրսում, որը արագ կարգավորվել և հարթվել է։ Վ. Մարուքյանը պրակտիկայի ղեկավարներից զատ կարևորեց նաև մանկավարժների և հոգեբանների մասնակցային բաղադրիչը և համապատասխան հաստատություններում հատկացված ժամաքանակով այցելությունների ապահովումը։

Վ. Մարուքյանն անդրադարձավ մագիստրոսի կրթական ծրագրի երկրորդ կուրսերի պրակտիկային և կարևորեց ուսանող–ղեկավար կապի պահպանումն ու գործընթացի ճշգրիտ կազմակերպումը։ Ամբիոնի նիստի ընթացքում կարևորվեց նաև մագիստրոսական կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողների պրակտիկայի գործընթացում կարևորել ներկայաթերթիկների, յուրաքանչյուր վարած դասի շրջանակներում հակիրճ վերլուծության առկայության փաստը, որը պետք է ներկայացվի նաև պրակտիկայի պաշտպանության ժամանակ։ Ընդգծվեց նաև, որ չնայած համապատասխան երեք շաբաթը համընկել է բակալավր կրթական ծրագրի ուսանողների պրակտիկայի և միջանկյալ ստուգումների ժամանակաշրջանի հետ, միևնույն է մագիստրոսները հնարավորություն ունեն ֆակուլտետի դասերի կտրվածքով

լրացնելու համապատասխան պահանջվող ժամաքանակը: Պրակտիկան ավարտվելուն պես կնշանակվի պաշտպանության օրը, որին կներկայանան բոլոր մագիստրոսները, իսկ հաջորդ տարվանից արդեն իսկ յուրաքանչյուր մագիստրոս ղեկավարի հետ համատեղ կկազմի դասացուցակ և այդ համակարգվածությամբ կկազմակերպվի պրակտիկան, որը իր հերթին նաև յուրովի կբացառի կուրսերում մագիստրոսների կուտակումները: Կարևորվեց նաև առարկայական թերթիկներում կազմակերպվող աշխատանքների, գնահատման գործընթացի օբյեկտիվությունը:

Ամբիոնի նիստի ընթացքում ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանի և պրակտիկայի ղեկավար պատասխանատու Վերա Մարուքյանի կողմից առաջարկվեց հաստատել պրակտիկայի մեկնարկից առաջ ղեկավարների և մագիստրոսների համատեղ քննարկման արդյունքում դասացուցակների կազմումը, համաձայն որի կիրականացվեն մագիստրոսների պրակտիկ գործունեությունը: Ընդգծվեց նաև, որ մագիստրոսները հնարավորություն ունեն նաև մասնակցելու ֆակուլտետի հարակից ամբիոնի բակալավր կրթական ծրագրում կազմակերպվող դասերին՝ նախապես ձեռք բերելով պայմանավորվածություն համապատասխան դասավանդող դասախոսի հետ: Կարևորվեց նաև անհատական առարկայական վերլուծական թերթիկների առկայությունը, ինչպես նաև ըստ վարած դասերի անհատական գրանցաթերթիկներում ուսանողների մուտքերի հաստատումն ու համապատասխան դասախոսի կողմից ստորագրությամբ հաստատումը:

Ամբիոնի նիստի 21 դասախոսներից նիստին ներկա էին 19–ը, կողմ քվեարկեց 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

- Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանի կողմից կարևորվեց և շեշտադրվեց բուհի 100–ամյակի կապակցությամբ միջոցառումների շարքը և ամբիոնի դասախոսների կողմից ակտիվ մասնակցության ցուցաբերումը: Այդ համատեքստում հատկապես

առանձնահատուկ շեշտադրվեց ս.թ. նոյեմբերի 6–ին և 7–ին կազմակերպվող միջոցառումները։

Նիստի նախագահ	**Թերեզա Ազատյան**
Նիստի քարտուղար	**Սվետլանա Մուրադյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի

հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի խորհրդի

2022 թ. դեկտեմբերի 06-ի առերես նիստի

Օրակարգ

1. Մագիստրատուրայի ուսանողների ուսումնական գործընթացի մասին:

Զեկուցող՝ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար,

պրոֆեսոր Սիրանուշ Կարապետյան

2. Մագիստրատուրա 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի և բակալավրիատ առկա 4-րդ կուրսերի, հեռակա 5-րս կուրսերի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:

Զեկցողներ՝ ամբիոնի գիտական ղեկավարներ

3. Ընթացիք հարցեր:

1. Մագիստրատուրայի ուսանողների ուսումնական գործընթացի մասին խոսեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար պրոֆեսոր, մ.գ.թ. Սիրանուշ Կարապետյանը: Ս. Կարապետյանը ընդգծեց, որ ֆակուլտետը հաշվետու ժամանակահատվածում իրապես ունի խնդիր, քանի որ առկա են սակավաթիվ ուսանողներով բեռնված կուրսեր: Այս համատեքստում ֆակուլտետը մշտապես շահագրգիռ է պահել ֆակուլտետի ամբողջականությունը: Հետևաբար ընդգծվեց ֆակուլտետի, ինչպես նաև ամբիոնի յուրաքանչյուր դասախոսի կողմից ուսանողների բացակայությունների հանդեպ գերհետևողականությունը և պատասխանատվության զգացումը: Ս. Կարապետյանի կողմից կարևորվեց վերոնշյալ խնդրի շուրջ ամբիոնի և

ֆակուլտետի համակարգային մոտեցումը, ինչպես նաև յուրաքանչյուր օր մոտիվացված լսարան մտնելու պատրաստակամությունը։

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանի կողմից միևնույն ժամանակ շեշտադրվեց դասերի ճիշտ ժամանակին սկսելու և ավարտելու, ուսանողների մասնակցության բաղադրիչի կարևորումը, ինչպես նաև էլեկտրոնային մատյաններում ամենօրյա ներկա բացակայի կատարումը։ Ընդգծվեց նաև վերջին ժամանակահատվածում հատկապես ռեկտորատից հաճախակի կազմակերպվող ստուգումները։ Թ. Ազատյանը նշեց նաև, որ հիմնական բացակայությունները հանդիպում են մագիստրոսների շրջանում, որը մեկնաբանվում և բացատրվում է ուսման հետ զուգահեռ աշխատանքային գործունեությամբ։

2. Մագիստրատուրա 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի և բակալավրիատ առկա 4-րդ կուրսերի, հեռակա 5-րս կուրսերի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին խոսեցին գիտական ղեկավարները։ Ամբիոնի՝ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների գիտական ղեկավարները ներկայացրեցին իրենց ավարտական կուրսերի ուսանողների կատարողականությունը և հաշվետու ժամանակահատվածում իրականացրած աշխատանքները։ Ներկայացվեցին յուրաքանչյուրի կողմից կատարված աշխատանքները, առկա բաց թողումները, խնդրահարույց դեպքերը։

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը հորդորեց բոլոր գիտական ղեկավարներին հետամուտ լինել բոլոր աշխատանքներին, ինչպես նաև խնդրահարույց դեպքերի վերաբերյալ գրավոր ներկայացնել զեկուցագրեր՝ հիմնավոր ներկայացնելով իրավիճակը։ Թ. Ազատյանը ամբիոնի բոլոր դասախոսներին հորդորեց մինչ օրվա ավարտը ներկայացնել գրավոր հաշվետվությունները։

Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին –** Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից ստորև ներկայացված մեթոդական ուղեցույցների և աշխատանքային գիրք–տետրերի՝ ֆակուլտետի խորհրդի հաստատմանը երաշխավորելու հարցը.

1. «Մայրենի 1. Այբբենական շրջան» աշխատանքային գիրք-տետր

2. «Մաթեմատիկա 1. Թվային շրջան» աշխատանքային գիրք-տետր

3. «Կերպարվեստ 1» աշխատանքային գիրք-տետր

4. «Տեխնոլոգիա 1» աշխատանքային գիրք-տետր

5. «Մայրենի 1. Այբբենական շրջան աշխատանքային գիրք-տետրի ուսուցչի մեթոդական ուղեցույց»

6. «Մաթեմատիկա 1. Թվային շրջան աշխատանքային գիրք-տետրի ուսուցչի մեթոդական ուղեցույց»

7. «Կերպարվեստ 1. աշխատանքային գիրք-տետրի ուսուցչի մեթոդական ուղեցույց»

8. «Տեխնոլոգիա 1. աշխատանքային գիրք-տետրի ուսուցչի մեթոդական ուղեցույց»

9. «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների նկարագիրը կրթության կազմակերպման գործընթացում» մեթոդական ձեռնարկ

10. «Կրթության կազմակերպման գործընթացում կիրառվող աջակցող տեխնոլոգիաներ» ձեռնարկ

11. «Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աշխատանքների կազմակերպման ուղեցույց» ձեռնարկ

12. «Մատչելի կրթական միջավայր. Ֆիզիկական միջավայրի հարմարեցումներ» մեթոդական ուղեցույց-ձեռնարկ

13. «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառող դասավանդման կարողությունների զարգացում» մեթոդական ուղեցույց-ձեռնարկ

Արտահայտվեցին – մ.գ.թ., դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Զաբելլա Զոհրաբյանը, Արաքսյա Սվաջյանը:

1. **Որոշեցին** – ֆակուլտետի խորհրդի երաշխավորմանը ներկայացնել Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից ներկայացված վերոնշյալ մեթոդական ուղեցույցները և աշխատանքային գիրք–տետրերը:

Ամբիոնի նիստի 21 դասախոսներից նիստին ներկա էին —— –ը, կողմ քվեարկեց -----, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. Թերեզա Ազատյանը ներկայացրեց ամբիոնի կողմից մասնագիտացումների միացման և նոր հայտի ներկայացման հարցը, որի նախնական ներկայացվող տարբերակի վրա աշխատել է ամբիոնից ձևավորված խումբ: Հստակ ներկայացվել է ծրագրի բովանդակությունը, նպատակը, նախատեսվող վերջնարդյունքները, գնահատման համակարգը, առարկայացանկը, ենթադրվող դասավանդող դասախոսների անվանացանկը: Մշակված և կազմված նախնական տարբերակը ներկայացվել է համալսարանի որակի վարչություն:

3.

Նիստի նախագահ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար **Սվետլանա Մուրադյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2023թ. հունվարի 27-ի առերես նիստի

Օրակարգ

1. ՄԿԾ-ների վերանայման ընթացքի մասին

Զեկուցողներ՝ մ.գ.թ., դոցենտ Սուսաննա Մուրադյան

2. 2020-2023 ուս տարում ամբիոնում ձևակերպված հայցորդների թեմաների հաստատում և գիտական ղեկավարների նշանակում

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ մ.գ.թ., դոցենտ Թերեզա Ազատյան

3. Ընթացիք հարցեր

1. ՄԿԾ-ների վերանայման արդյունքների մասին զեկուցեց ամբիոնի որակի պատասխանատու Սուսաննա Մուրադյանը: Սուսաննա Մուրադյանը նշեց, որ համաձայն ներկայացված ժամանակացույցի իրականացվել է թե՛ բակալավրի, թե՛ մագիստրոսի թվով ութ մասնագիտական կրթական ծրագրերի վերանայում: Վերանայման ընթացքում կարևոր շեշտադրումն իրականացվել է մասնագրերի նպատակի, բովանդակության, խնդիրների, վերջնարդյունքների վերանայմանը: Աշխատանքները կազմակերպվել են հիմք ընդունելով համալսարանի կողմից ներկայացված տարբերակը: Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանի և ամբիոնի որակի պատասխանատու Սուսաննա Մուրադյանի կողմից կրկին շեշտադրվեց և կարևորվեց երկրորդ կիսամյակում էլեկտրոնային հարթակներում տեղադրվող ԱՈՒՄՓ-ներում առաջնորդվելու նորովի ներկայացված մասնագրերով:

2. 2020-2023 ուսումնական տարում ամբիոնում ձևակերպված հայցորդների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը ներկայացրեց ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը։ Թ. Ազատյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնն ունի երկու նոր ձևակերպված հայցորդ։ Հայցորդ Հասմիկ Առաքելյանը /գիտական ղեկավարը ամբիոնի դոցենտ Արաքսյա Սվաջյան/ ներկայացրել է <<Աջակցող տեխնոլոգիաների կիրառումը ծանր և խորը խանգարումներով պայմանավորված ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթության կազմակերպման գործընթացում>> ատենախոսական աշխատանքի թեման, իսկ Արեն Ալավերդյանը /գիտական ղեկավար ամբիոնի դոկտոր պրոֆեսոր Ռոբերտ Ազարյան/ ներկայացրել է <<Լսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման հարցերում ուսուցիչների իրազեկվածության մակարդակի բարձրացման միջոցներն ու մեթոդները>> ատենախոսական աշխատանքի թեման։ Թ. Ազատյանի կողմից ներկայացվեց հայցորդների ատենախոսական աշխատանքների թեմաների նախնական տարբերակները, որը քննարկվեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից։

Վերջնարդյունքում ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից որոշվեց հայցորդներին և գիտական ղեկավարներին առաջարկել հստակ ձևակերպելու ատենախոսական աշխատանքների թեմաները, քանի որ լիարժեք չի երևում ներկայացված աշխատանքների ուղվածությունը, խնդրո առարկան։

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին ------ը, կողմ քվեարկեց ------ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0։

Ընթացիկ հարցեր

Պրակտիկայի պատասխանատու Վերա Մարուքյանը առաջարկեց կատարել պրակտիկայի բաղադրիչների վերանայում և որոշակի փոփոխությունների կատարում, որն ավելի շատ պայմանավորված էր ՏՄԱԿ-ներում կազմակերպվող պրակտիկայի

գործընթացով։ Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը քննարկման արդյունքնում որոշեց և առաջարկվեց ավելացնել գնահատման բաղադրիչ։

Նիստի նախագահ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար Սվետլանա

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2023թ. մարտի 14-ի առերես նիստի

Օրակարգ

1. Google classroom Էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման արդյունքների մասին

/Զեկուցող՝ Ս.Մուրադյան/

2. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին։

/գիտական ղեկավարներ/

3. Ընթացիք հարցեր

1. Google classroom Էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման արդյունքների մասին խոսեց Սուսաննա Մուրադյանը։ Ս. Մուրադյանը նշեց, որ մշտադիտարկման արդյունքում վեր են հանվել այն խնդիրները, թերությունները, որոնք հանդիպել են դասախոսների հարթակներում։ Ընդգծվեց, որ լրջագույն խնդիրներ չեն եղել, հիմնականում հանդիպել են թերություններ, պայմանավորված հաստատման ամսաթվերի, արձանագրությունների համարների հետ։ Կարևորվեց նաև ՄԿԾ-ների և հարթակներում տեղադրվող ԱՈՒՄՓ-երի վերջնարդյունքների համապատասխանության ապահովումը։ Կարևորություն տրվեց նաև գնահատվող առաջադրանքների ժամանակին տեղադրմանը։

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը նույնպես փաստեց, որ ամբիոնը չափազանց հետևողական է հաստատված ժամանակացույցերում դասախոսների կողմից հարթակների վարման աշխատանքներին: Ինչպես նաև ընդգծվեց, որ բացի Սուսաննա Մուրադյանից մշտադիտարկման աշխատանքներ իրականացնում է ամբիոնի գործավարը, որը պայմանավորված է նրանով, որ որևէ բացթողում ամբիոնը չունենա: ՄԿԾ-ների կարգավորման, վերանայման համար քննարկման արդյունքում որոշվեց հստակեցնել ժամանակացույց, համաձայն որի աշխատանքները կբերվեն վերջնական տեսքի:

2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին խոսեցին գիտական ղեկավարները: Յուրաքանչյուր գիտական ղեկավար ներկայացրեց աշխատանքների կատարման ընթացքը, առկա խնդիրները, մտահոգությունները:

Ընթացիկ հարցեր

- Թ. Ազատյանը ներկայացրեց ամբիոնի մ.գ.թ. դոցենտ Անահիտ Մանուկյանի մոտ մագիստրոսի կրթական ծրագրում վերականգնվող ուսանող Տաթև Սմբատյանի <<Լսողության խանգարում ունեցող երեխաների երկխոսության զարգացումը արտադասարանական ժամերին>> թեմայի վերահաստատումը:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 19-ը, կողմ քվեարկեց 19-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

- **Լսեցին –** հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Առաքելյան Հասմիկի <<>> ատենախոսության թեմայի հաստատման հարցը՝ գիտական ղեկավար մ.գ.թ. դոցենտ Արաքսյա Սվաջյան:

Արտահայտվեցին – մ.գ.թ. դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Ալինա Մանուկյանը, Զաբելլա Զոհրաբյանը, Կիմ Սարուխանյանը, Սվետլանա Մուրադյանը:

Որոշեցին – ֆակուլտետի խորհրդին միջնորդել հաստատելու Հասմիկ Առաքելյանի <<>> ատենախոսության թեման:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 19-ը, կողմ քվեարկեց 19-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

- **Լսեցին –** հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Ալավերդյան Արենի <<Ժեստերի լեզվի ուսուցման մեթոդաբանությունը մանկավարժական բուհերում>> ատենախոսության թեմայի հաստատման հարցը՝ գիտական ղեկավար մ.գ.դ. պրոֆեսոր Ռոբերտ Ազարյան:

Արտահայտվեցին – մ.գ.թ. դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Ինեսսա Հարությունյանը, Լուսինե Բաբայանը:

Որոշեցին – ֆակուլտետի խորհրդին միջնորդել հաստատելու Արեն Ալավերդյանի <<Ժեստերի լեզվի ուսուցման մեթոդաբանությունը մանկավարժական բուհերում>> ատենախոսության թեման:

Նիստի նախագահ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2023թ. ապրիլ 18-ի առերես նիստի

Օրակարգ

1. Մագիստրոսական թեզերի և առկա համակարգի բակալավրիատի ավարտական աշխատանքների նախնական պաշտպանության արդյունքների քննարկում:

/Զեկուցող՝ ամբիոնի վարիչ մ.գ.թ., դոցենտ Թ. Ազատյան/

2. <<Մուտքային համակարգ>> էլեկտրոնային հարթակի փոփոխության մասին:

/Զեկուցող՝ ամբիոնի մասնագետ Մ. Հունանյան/

3. Ընթացիք հարցեր

1. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ներկայացրեց մագիստրոսական թեզերի և առկա համակարգի բակալավրիատի ավարտական աշխատանքների նախնական պաշտպանության արդյունքները: Նշվեց, որ բոլոր ուսանողները նախնական պաշտպանությանը ներկայացել են տեսասահիկներով, նախապես պատրաստված զեկույցներով: Որպես խնդիր առանձնացվեց մագիստրոսի կրթական ծրագրում և ավարտական աշխատանքներում նպատակի ձևակերպումը, խնդիրների քանակը /հիմնականում առաջարկվել է խմբավորել ներկայացված խնդիրները/, միևնույն աշխատանքներում տառատեսակի տարբերությունները, արդիականության ձևակերպումը, գրականության ցանկի հստակ ձևակերպումը: Թ. Ազատյանը ներկայացրեց բուհի կողմից ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ձևակերպման պահանջները, որտեղ չի ներկայացվում պաշտպանության ներկայացվող դրույթներ: Նիստի ընթացքում համատեղ քննարկման արդյունքում որոշվեց ցանկության և անհրաժեշտության դեպքում մագիստրոսներին թույլատրել թեզում ներկայացնել պաշտպանության ներկայացվող դրույթներ:

2. <<Մուտքային համակարգ>> էլեկտրոնային հարթակում առկա փոփոխությունների մասին խոսեղ ամբիոնի մասնագետ Մարիամ Հունանյանը: Նշվեց, որ ուսուցման համակարգի էլեկտրոնային հարթակում ստեղծվել է առցանց էլեկտրոնային զեկուցագրեր գրելու հնարավորություն, որը լիիրավ կգործի սեպտեմբեր ամսից, իսկ ներկա պահին դեռևս պահանջվելու է ստեղծել, ներբեռնել և պրինտ անել զեկուցագրի օրինակը: Ներկայացվեց հարթակի զեկուցագիր բաժինը, որը ընձեռում է ամփոփագրի ուշացման կարգավորման և ամփոփագրի սխալի ուղղման

հնարավորություն։ Պարզապես պետք է ընտրել համապատասխան կուրս, բաժին, առարկա, ուսումնական տարի, ամփոփագրի տեսակ, կիսամյակ և ստեղծել զեկուցագրի օրինակը։ Կարևորվեց նաև ամփոփագրի ստեղծման պատճառի ճշգրիտ ձևակերպման անհրաժեշտությունը, քանի որ հաճախ նշվում է տեխնիկական պատճառով, որը այդքան էլ ցանկալի չէ։ Ընդգծվեց նաև, որ զեկուցագրերը ընդունվելու են միայն ներկայացված տարբերակով։

Ընթացիկ հարցեր

- Քննարկվեց 2022-2023 ուս տարվա 2-րդ կիսամյակի առկա և հեռակա ուուցման համակարգի քննական հարցաշարերի և տոմսերի հաստատման հարցը արդյունքում որոշվեց վերանայել բոլոր հարցաշարերը տոմսերը կազմել ըստ ընդունված ձևաչափի, և հաստատել այս ամբիոնի նիստով։
- Թ. Ազատյանը նշեց, որ համալսարանի բանասիրական ֆակուլտետից մագիստրոսի կրթական ծրագրի հատուկ մանկավարժության բաժնի առաջին կուրս տեղափոխվել է մեկ ուսանող՝ Անի Տոնոյան։ Գիտական ղեկավար նշանակվել է Հասմիկ Սարգսյանը, իսկ մագիստրոսական թեզի թեման առաջարկվեց ղեկավարին հստակեցնել մագիստրոսի հետ և ներկայացնել ամբիոնի քննարկմանը։
- Զ. Զոհրաբյանը նշեց, որ ունի մեկ մագիստրոս, ով իր հետազոտման համար ընտրել էր «Երջանկության ճանապարհ» բարեգործական հասարակական կազմակերպությունը, սակայն հիմա հետազոտությունը կիրականացնի մեկ այլ վայրում, չնայած մագիստրոսական թեզի թեմայում կազմակերպությունը նշված չէ։

Նիստի նախագահ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2022թ. հունիսի 22-ի առերես նիստի

Օրակարգ

1. Մագիստրատրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյուքների քննարկում, հաստատում:

/Զեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյան/

2. 2022-2023 ուս տարվա ծավալի և ծանրաբեռնվածության մասին:

/Զեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյան/

3. Ընթացիք հարցեր:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյուքներ: Համաձայն որի ներկայացվեց յուրաքանչյուր մասնագիտացման համար միջինացված

արդյունքները, որտեղ ընդգծվեց, որ բակալավր կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգում ամբիոնը չի ունեցել շրջանավարտներ։ Մինչդեռ մագիստրոսի կրթական ծրագրում ամբիոնն ունեցել է 50 շրջանավարտ, որից օլիգոֆրենոմանկավարժություն մասնագիտության 10 շրջանավարտ, որտեղ միջին գնահատականը կազմել է 79,30 միավոր, հատուկ մանկավարժություն մասնագիտությունն ավարտել է 14 շրջանավարտ միջին գնահատականը՝ 96,30, սուրդոմանկավարժություն մասնագիտություն՝ 8 շրջանավարտ միջին գնահատականը՝ 92,26, տիֆլոմանկավարժություն մասնագիտության 5 շրջանավարտ, որտեղ միջին գնահատականը կազմել է 94,76 միավոր, հատուկ հոգեբանություն մասնագիտության 13 շրջանավարտ, որտեղ միջին գնահատականը կազմում է 85,16 միավոր։ Սակայն հատուկ հոգեբանության մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի մեկ ուսանող ստացել է անբավարար գնահատական, որը սպասելի էր, քանի որ ողջ ուստարվա ընթացքում մագիստրոսը ունեցել է դժվարություններ, ղեկավարը զեկուցել է առկա խնդիրների մասին, ղեկավարի կողմից մշտապես կատարվել է խորհրդատվություն, սակայն ապարդյուն։

Ինչ վերաբերում է հեռակա ուսուցման համակարգին, ապա ամբիոնն ունեցել է օլիգոֆրենոմանկավարժության 5 շրջանավարտ, որտեղ միջին գնահատականը կազմում է 87,11 միավոր և տիֆլոմանկավարժության 5 շրջանավարտ, որտեղ միջին գնահատականը կազմում է 89,60 միավոր։ Բացի վերը ներկայացվածը ամբիոնն ունեցել է նաև 2 եռատարեցի ուսանողներ, ովքեր քննությունը հանձնել են քննական տոմսերով, գնահատվել են հինգ բալային համակարգով։

Թ. Ազատյանը մասնակիորեն անդրադարձավ նաև պետական քննական հանձնաժողովի նախագահի կողմից կատարված դիտարկումներին, առաջարկություններին, ուժեղ և թույլ կողմերին։ Համաձայն որի հատկապես առանձնացրեց և կարևորեց այն, որ ըստ համձնաժողովի նախագահի հանձնաժողովը համալրված է եղել բարեխիղճ, մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող կազմով, պաշտպանության գործընթացը մշտապես ընթացել է սահուն և առանց խոչընդոտների, բոլոր զեկուցումները ներկայացվել են սահիկաշարերով, կարևորվեց նաև այն հանգամանքը, որ պաշտպանություններին ներկա են եղել ղեկավարների

մեծամասնությունը: Ներկայացվեց նաև թույլ կողմերը, համաձայն որի որոշ աշխատանքների նպատակները և խնդիրները ձևակերպված էին ոչ հստակ, որոշ եզրակացություններ կրում էին ընդհանրական բնույթ, առանձին դեպքերում ուսանողները դժվարանում էին մեկնաբանել պարզ հարցեր:

Թերեզա Ազատյանը նշեց նաև հանձնաժողովի նախագահի կողմից կատարված առաջարկությունները, համաձայն որի հատկապես առաջարկվել է հստակեցնել աշխատանքների գլուխների և ենթագլուխների վերնագրերը, եզրակացությունները, նպատակները:

Թերեզա Ազատյանն առաջարկեց մագիստրատրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյուքները համարել գոհացուցիչ և հաստատել:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ներկայացրեց 2022-2023 ուս տարվա ամբիոնի ծավալի և ծանրաբեռնվածության մասին: Համաձայն որի հստակ ընդգծվեց, որ ամբիոնն ունի ժամաքանակի նվազում, որը պայմանավորված է մի շարք խնդիրներով: Վերը ներկայացվածն էլ իր հերթին պայմանավորում է ամբիոնի բոլոր դասախոսների, այդ թվում նաև մրցույթով անցած ընտրված դասախոսների /իրենց դիմումին համաձայն/ դրույքաչափերի փոփոխություն: Ամբիոնն ունի երկու համատեղող աշխատակից, ովքեր կունենան սահմանված դրույքաչափ: Հատկապես առանձնացվեց տիֆլոմանկավարժության մասնագիտացումը, որը բավականին խնդրահարույց պատկեր է ներկայացնում գործող կուրսերի առումով, ինչն էլ իր հերթին խնդիր է դառնում ամբիոնի տիֆլոմանկավարժների դրույքաչափերի ապահովման հարցում: Թ. Ազատյանը նշեց նաև այն հանգամանքը, որ դրույքաչափերի նվազումը պայմանավորված է ոչ միայն դիմորդների քանակի նվազումով, այլև ավարտական ծանրաբեռնվածությունից ընթերականերին, գրախոսություններին հատկացվող ժամերի

բացակայությամբ, ինչպես նաև լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի կողմից ամբիոնին փոխանցվող ժամերի բացակայությամբ:

Նիստի նախագահ՝ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2023թ. հունիսի 22-ի առերես նիստի

Օրակարգ

1. 2022-2023 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների քննարկում, հաստատում:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ մ.գ.թ., դոցենտ Թերեզա Ազատյան

2. 2023-2024 ուստարվա նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ մ.գ.թ., դոցենտ Թերեզա Ազատյան

3. Ընթացիկ հարցեր

1. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ներկայացրեց 2022-2023 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքները: Թ. Ազատյանը նշեց, որ համապատասխան ուստարում ամբիոնը գրանցել է բավականին բարձր ցուցանիծներ, համապատասխանաբար կտրված, անբավարար ստացած, ինչպես նաև չներկայացած ուսանող չի եղել: Առկա համակարգում եղել է ութ շրջանավարտ երեք շրջանավարտ

օլիգոֆրենոմանկավարժության բաժնում, երեք շրջանավարտ՝ սուրդոմանկավարժություն բաժնում/, մագիստրոսի կրթական համակարգում սուրդոմանկավարժություն բաժնում եղել է երեք շրջանավարտ, օլիգոֆրենոմանկավարժություն և տիֆլոմանկավարժություն բաժիններում եղել են մեկական շրջանավարտներ, հատուկ մանկավարժություն բաժնում եղել է տասնմեկ շրջանավարտ, հատուկ հոգեբանություն բաժնում եղել է երեք շրջանավարտ։ Վերոնշյալ բոլոր բաժիններում գրանցվել են բավականին բարձր ցուցանիշներ, միևնույն ժամանակ խնդրահարույց դեպքեր չեն գրանցվել։ Հեռակա կրթական համակարգի սուրդոմանկավարժություն բաժնում եղել է վեց շրջանավարտ, օլիգոֆրենոմանկավարժություն բաժնում հինգ շրջանավարտ։ Թ. Ազատյանը հիմնականում առանձնացրեց այն հանգամանքը, որ հաճախ ուսանողները դժվարանում էին հստակ պատասխանել առաջադրված հարցերին, կարևորվեց նաև մինչ պաշտպանությունների շեմին հասնելը։ Կարևորվեց նաև այն հանգամանքը, որ աշխատանքները ներկայացնելիս հատկապես հետամուտ լինել տիտղոսաթերթի կազմությանը, պահանջված ձևաչափով աշխատանքների պատրաստմանն ու ներկայացմանը։

3. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ներկայացրեց 2023-2024 ուստարվա նախապատրաստական աշխատանքների ընթացքը։ Թ. Ազատյանը նշեց, որ ի տարբերություն նախորդ ուսումնական տարվա /ընդհանուր ծավալը կազմել է 14681 ժամ և լոգոպեդիայի և վերականգնողական ամբիոնի կողմից փոխանցված է եղել 180 ժամ/ համապատասխան ուսումնական տարում ամբիոնն ունի 14463 ժամ։ Հնարավորինս աշխատանքներ են տարվելու, որպեսզի աշխատատեղ չկրճատվի, սակայն հնարավոր է, որ մեկ հոգանոց կուրսեր չլինեն։ Խնդիրները հիմնականում պայմանավորված են ընդունելության քննություններով, քանի որ թե՛ առկա, թե՛ հեռակա կրթական համակարգում կենտրոնացված քննություններ են լինելու։

4. Ամբիոնում քննարկվեցին և հաստատվեցին 2023-2024 ուս տարվա մագիստրատուրայի ընդունելության հարցաշարերը։

Թերեզա Ազատյանը հորդորեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին հնարավորինս հետամուտ լինել իրազեկման, մասնագիտական կողմնորոշման և կուրսերի համալրման գործընթացին:

Նիստի նախագահ՝ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար՝ **Սվետլանա Մուրադյան**